

tiser» լրագիրը, որ յունվարի 26-ի հրովարտւոյն արգելւած է անորոշ ժամանակով:

Բրիտանական զեւսական անձնասիրութիւնը վերաբերւած է, որովհետեւ Բ. Դուռը ոչինչ ուշադրութիւն չը դարձրից, և կարծես այդ զեւ. բաւական չէր, Դուռը մինչև անգամ մի շքանշանով էր պատուեց նրա հակառակորդ Խաչիկ փաշային, իսկ անգլիական լրագիրն այն պատճառով պատժեց, որովհետեւ նա սկսեց պաշտպանել անգլիական զեւսականին, և սաստիկ յարձակողական ու թշնամական յօդուածներ գրել թիւրքաց կառավարութեան դէմ: Բայց այս՝ նա համարձակվեց յարձակվել սուլթանի արտօնութիւններին վրա, և ամեն նախնայելի խօսքերով պատարակեց Խաչիկի շքանշանը:

Յօդուածագիրն ասում է, որ այդ շքանշանով սուլթանը զարդարեց պատերազմական պաշտպանի կուրծքը, և ամենանախնայելի համեմատութիւններ է անում Խաչիկ փաշայի և պոլիցիական մինիստրի մէջ: Իսկայայէս ա՝ սա՞ծ ոչինչ նշանակութիւն չունի անգլիացոց համար լրագիրներին դարձրեցնելը, որովհետեւ ինչպէս «Levant Herald» նորից դուրս է գալի «Le Matin» անունով լրագրի դիմակի տակ, այնպէս էլ «Commercial Advertiser» լրագիրը կարող է մի ուրիշ լրագրի դիմակի տակ դուրս գալ:

«Le Matin» լրագիրն իր վերջին համարներէն մէկի մէջ սաստիկ սպառնալիքներով էր խօսում Թիւրքիայի դէմ: Նա ասում է, որ ուսու-թիւնը պատերազմը Ֆրանսիայի օժանդակութեամբ կը դիւրացնի յունական հարցի վճիռը, և կը պատրաստի թիւրքաց պետութեան քայքայումը: Վերջինիս լրագիրն արգելման հրովարտակը ստորագրեց Մէհմէդ Ենիֆէթէ Էնիֆէթին, որը նորեւրում նշանակվել է տպագրութեան բաժնի գլխաւոր, այն ինչ առաջ երկար ժամանակ միայն գլխաւորի օգնական էր: Այդ բաժնի նախկին գլխաւորի՝ Պէրուէն-Էնիֆէթի փոխելու պատճառը գլխաւորապէս պէտք է որոնել այն բանի մէջ, որ նա չափեց դուրս ներողութիւն էր դէպի նորերս արգելւած անգլիական օրգանի յանդուգն յօդուածները և դրանից առաջ ևս դէպի «Էնիֆէթէ» հայ լրագրի յօդուածները: Այս լրագրի խմբագիրները, ինչպէս յայտնի է, նորերս բանտարկեցան և դատի կենթարկվին այն յօդուածների պատճառով, որոնց համար տպագրութեան վարչութեան գլխաւորից միայն նախազգուշութիւն էին ստացել:

Յունական հարցը տեղից չէ շարժվում, մի կողմից այն պատճառով, որ Սուլթանը միշտ յետաձգում է իրադէի ստորագրելը, որը անհրաժեշտ է սահմանական զինք որոշելու համար, իսկ միւս կողմից, որովհետեւ այս զինք համար կազմած նոր նախագիծը Անգլիայից զեւ. ևս հաւանութիւն չէ գտել: Բ. Դուռը ևս, որքան կարող է ամեն միջոցներ զօրծ է դնում, որ ամենքի ցանկացած զուսինեան հարցի վճռելը ձգձգվի: Սալմաս փաշան կրկին առաջարկեց փոխանակել կալուածները և վարձատրութիւն տալ Դուսիս նեան և Պլավեան նահանգների համար, որոնք Թիւրքիային կը մնան: Բայց Ձերնօգործի իշխան Նիկողայոսը մերժեց այդ փոխանակութիւնը: Նրէի յունվարի 26-ին, Սալմաս փաշան յետաձգեց զիսլամանների ընդունելութեան օրը, որովհետեւ պէտք է ներկայ դրանվէր մինիստրների խորհրդի նստին, մի քանի նշանաւոր հարցեր վճռելու համար: Ձր նայելով մաքսական հարկերի կանոնաւոր ըստացվելուն, պալատը փողի այնպիսի կարօտութիւն ունի, որ անցեալ շաբաթ այնքան փող չունէր, որ կարողանար վճարել պալատի միս հայթայթողներին: Բայց հաստատում են նոյնպէս, որ սուլթանը ստիպութիւն ունի իւրաքանչիւր ամիս բաւական նշանաւոր զուամարներ ուղարկել անգլիական բանկերը և որ նրա յետ գցած փողերը անցեալ տարի

հասան բաւական նշանաւոր զուամարի՝ 80,000 թիւրքական լիւրայի (1,900,000 ֆրանկ): Բրիտանայից եկող ծանապարհորդները հաստատում են, որ այնտեղ մեծ պատրաստութիւններ են տեսնում, վաղ թէ ուշ, սուլթանի աթոռահատ տեղը տեղափոխելու այն քաղաքում, որտեղ գտնվում է Օսմանի դամբարանը և որը, շատ կարելի է, կը լինի նրա սերունդի գերեզմանը:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԳԻԱՅԻՑ

Կ. Պոլիս 26 յունվ.

Ազգային ընկերութեանց միացման խնդիրն բաւական ժամանակ է որ կը յուզուի, և զի զեւ. չը կար հաստատ իրողութիւն մը, չուզեցինք բան մը գրել: Այս խնդիրն Տփլիսէն ծագում առաւ. «Մը-չախ» ուժգին զօրք մը տուաւ, յամառութեամբ գործոյն ետեւէն ընկաւ և ամեն ջանք ըրաւ որ երեք ընկերութիւնը ի մի ձուլուին: Հարկ էր որ ընկերութիւնը այս կարծիքներն ի նկատի առնուին: Ազատ ո և է կանխակալ համոզումներէ՝ ընկերութեանց վարչութիւններն կը սկսեն բանակցել միմիսին թէ այսպիսի ձուլում մը օգտակար է թէ վնասակար: Խնդիրն ձեռ կարծածին չափ հետ չէր: Նախ պէտք էր գիտենալ թէ միացեալ զօրաւոր ընկերութիւն մը կառավարութեան կողմէ վը-տանդի մը կենթարկուէր թէ ոչ: Այս հարցը բաւական ժամանակ սպառեց, բաւական խորհրդածութիւններ տեղի ունեցան և ազգային պետական անձանց կարծիքն առնուեցաւ: Համոզում մը գոյացաւ թէ միացեալ ընկերութեան խոհեմութիւնը ամեն փառնգի առաջ կրնայ առնուի, և զի այդ ընկերութիւնը ցարկ շատ զոյշ շարժեցան, ուստի իրենց ընթացքէն չեղուել երկուց մը չը կար:

Այս միջոցին թէ հոս և թէ հող սխալ և անհիմն հրատարակութիւններ լինելով, պահ մը մտա-բերն պտորեցան, բայց հանդարտութիւնը չուտով տիրեց: Գաղաքական խնդրէն յետոյ դրամական խնդրը կուգար. Պոլսոյ մէջ հայք այսօր երեք ընկերութեանց հաւասարապէս նուէր կուտան, արդեօք յետ միացման պիտի շարունակեն այսպէս. և թէ ինչ որ երեքն առանձին կը հաւաքէին, միացեալն նոյնը կամ աւելին պիտի ընէ թէ ոչ: Բաւական ատեն ալ այս խնդիրն դրաւեց. հաշուետե-րակքն նայուեցան, խոհարարուեց վիճակն ուշադրութեան առնուեցաւ, այս մասին ալ գոյացած համոզումը միացման նպատակաւ էր:

Կային ուրիշ խել մը հարցեր զորս զանց կաւ-նելը և կուգամ կազմակերպութեան եղանակին: Երեք ընկերութեանց կազմակերպութիւնը տարբեր է: «Արարատ»-ները բոլորովին նոր է. նուիրատու-ներուն փակուած են դռներն. սակաւթիւ խումբ մը կը խորհի, կը գործէ. երբ այս դրութիւնը հրապարակ կաւ, լաւ ընդունելութիւն գտաւ, զի աւաջները ամեն դրամ տուող ընկերութեանց մէջ խօսքի կը խառնուէր, անտի մեծ չփոթութիւններ. բայց յետոյ սկսան անուսպետական կոչել «Արա-րատ»-ները, սակայն առանց նուէր տալէ դադրելու, ընդհակառակն:

«Կարդացարեց» իւր դրութիւնը նոր փոխել է ր և երեսփոխանական դրութիւնը ընդունած էր, որով այն ևս քիչ թուով մարդկանց կը յանձնէր գործը: «Կիլիկիան»՝ բոլորովին ռամկավարական, առանց խտրութեան անգամը ժողովոյ կը մասնակցեն:

Երեքներն ալ իրենց կազմակերպութեան լաւ լի-նելուն համոզուած էին. շատ խորհրդածելով կազմակերպութեան եղանակն ալ որոշեցին. կը մնար կանոնադրական իսկ մը հարցեր: Ոչ ոք կուզէր առանց ապագային վրա վտանգ լինելու արդի ընկերութիւններն լուծել. և արդար էին. շատ զի-չերներ ժողովելով ընկերութեան հիմունքն ձգեցին և ապագայ կանոնագիրն պատրաստեցին:—Երբ այս ամենը լինցաւ, կարգը եկաւ խնդիրն ընդհանուր ժողովոյց ներկայացնել, զի առանց նոցա քուէին ոչինչ կարելի էր ընել. բաւական էր որոշար գործը: Առաջին նիստը «Արարատ»-ները՝ ըրաւ: Յունուար 20-ին կիրակի՝ օր ժողովականաց ստուար բազմութիւն մը կեդրոնական վարժարանը կը դուստ-րէր և այս հարցի մասին վարչութեան տեղեկա-գիրը կը լսէր: «Արարատ»-ները՝ վարչութիւնը կը յայտարարէր թէ «ազգին ներկայ վիճակին մէջ կեդրո-նական զօրաւոր ընկերութեան մը պէտքը զգալի է. այդ ընկերութիւնը աշխարհիս ամեն հայոց հա-մակրութիւնը և օգնութիւնը վայելելով կարող կը լինի փութով Հայաստանին և Կիլիկիոյ մէջ ազգային դատարարութիւնը ծաւալել, ազգին կրթութեան ներառարարուցելը կը համարուի և կընձեռէ հայ ժողովուրդին այն ծառայութիւններն որոց կարօտ է:

Այս մեծ ընկերութիւնը պատրաստելու տարեքններն կը գտնուէին երեք ընկերութեանց մէջ, որք փորձով ազգին վստահութիւնը վայելեցին: Ձեռք միջաբա-նութիւն մը տեղի կուենայ, շատ կանոնաւոր կեր-պով վարչութեան ծրագրի պաշտպաններու զուգին է պ. Մ. Չերազ որ ընտիր ատենաքանութեամբ մը շատ մտքեր կը համոզէ և եւրոպայի կըսեն «միջոց մը պէտք է, միջոց մը յառաջ կրնանք երթալ»: Միջոցներ, կը պատասխանէ Չերազ, միջոցներ հրէից հետ, միջ-ցներ յունաց հետ: Ձեռք ծափահարութիւններ կըն-կերանան Չերազի խօսքերու: Ժողովականք համո-զոււմ կը գոյացնեն. ներկալ անդամոց երեք քա-ռորդին քուէովը պէտք էր դրուէր այս որոշումը: Երեք քառորդէն շատ աւելի քուէ արուեցաւ, հե-տեաւոր «Արարատ»-ներն ընկերութիւնը նոյն օրն հանդիսաւոր կերպով որոշեց, ի մի ձուլուել «Կար-դացարեց»-Արեւելան և Կիլիկիան» ընկերութեանց հետ, նպատակ դնելով «Հայաստանի և Կիլիկիոյ մէջ կրթութիւն ծաւալել»: «Կարդացարեց» ևս, Կիլի-կիկիան» ալ հետգնեալ նիստեր պիտի ընեն, ամե-նայն կերպով կրնանք ապահով լինել որ նոքա ևս «Արարատ»-ներն նման պիտի կատարին: Միացեալ և ընկերութիւնը իւր առաջին նստին մէջ պիտի ըն-տրէ իւր անունը, որ պիտի լինի կամ հին անուն-ներէն մին, կամ նոր անուն մը:

Միացեալ ընկերութիւնը ազգային մտաւոր շար-ժման մէջ առաջին դերը պիտի կատարէ. Ռու-սիոյ հայք որ առաջին պատճառը եղաւ այս մի-ուրթեան, բնելով թէ «մի հսկայ գործ» պիտի կա-տարէր, նորա զարգացմանը և մեծութեանը աշ-խատելու գլխաւոր պարտականութիւնը ստանձնա-ծէր: Մէք ձեռ մտիկ ըրինք, դուք մեզ պիտի օգ-նէք, և ամենքս միասին Հայաստանի:

Բայց Հայաստանի պիտոյցներն ալ եթէ անթիւ են ըսեմք, Հափաղանցութիւն ըրած չեմք լինել, և արդէն յայտնի իսկ է: Կեդրեցիկ սեռն ալ իւր պար-տականութիւններն ունի և որչափ զոհ պէտք է լինի որ ընդհանուր շարժման իրենք ևս մասնակցե-լու փափաղ օժին և կը մասնակցեն, ապագայն իրենց ալ հող կը պատճառէ. միսթարական ե-րկոյթ մը շատ տխուր մտածութիւններ կը փա-րատէ: Այս խոհերն զմեզ կը պաշարէին, երբ յու-նուար 17-ի դիւնիէն առաւուս վերջինիս սրանց զողովայնով դուրս կելլէին: Միման ազգային ա-ռաջին պարահանգէնն էր: Ողբ սաստիկ ցուրտ, բայց պայծառ երկինք մը, ընտրեալ բազմութիւն մը կը դիմէր ի Բերա, այն դիւնին ներկայ լինելու այն հանդիսին որ կը տրուէր յօգուտ «Կարդացարեց» — Հայուհեաց ընկերութեան: Տիկին Լէարտ իւր պաշտպանութեան ներքն կանոնոյր այն հանդէսը, աղնուական տիկնայց մասնախումբ մը ջանք չէր ինչպիսի գործը յաջողութիւն. արանց խումբ մը իրենց աջակցութիւնը կը նուիրէին, յորս պ. Պետ-րոս Միսաքեան շատ նշանաւոր աշխատութիւններ յանձն կառնող: Հանդէսը խիստ շքեղ և սիրուն եղաւ, երեք օրերը ներու ձեռագործ աղւոր զօրք մը վիճակահանութեան դրուած էր. կայսերական երա-ժայտցախումբը յատուկ արտօնութեամբ ներկայ էր. հանգստան միջոցին օպերայի ընտիր հատուածներ կը նուազէր, և պահ մը զմեզ սարսուռացոյց, երբ յանկարծ Մարտ-Արաքսիի միլանադձիկ եղանակը Նշեցուց, Շատ անտրեքիւ և հրճուալքը երկկոյթ մը անցուցինք:

Չեմ կարծեր որ առիթ ունեցած լինեմ սոյն ըն-կերութիւնը ձեռ ծանօթացնելու. երբեմն գրած եմ Ազգանուէր Հայուհեաց վրա, նոքա ևս քիչ օրէն սուլթանի պաշտպանութեան ներքն մի պարահա-նգէս կուտան:

Որքանով, Պոլսոյ ընկերութեանց ծնողեան այդ classique թաղը, մի քանի աշխատանք օրի-որորին միանալով կը մտածեն Հայաստանի վար-ժուհիներ պատրաստելու եղանակին վրա. վար-ժուհիներու նուազութիւնը կարի իսկ զգալի է, և Հայաստանի մէջ աղջկանց վարժարան բանալ շատ դժուար է: Պարթիք աղջիկներ են, առանց վարա-նելու կը վարձեն տուն մը, կը ժողովին 14—15 աղջիկներ, որոց աղքատութիւնը գրաւական մ'է թէ լաւ ամուսնանով Հայաստան երթալն իրենց բաղկ. իրենք կը սկսեն անձամբ դաստիասել, ուսուցանել նոցա կը և ձեռագործ. կը հոգան այդ աշակերտաց ոչ միայն մտաւոր պէտքերն, այլ նոցա հագուստներն և ուտելիքն իսկ: Շատ ան-գամ վկայ եղաւ, մինչև ձմեռն ամենէն ցուրտ օ-րերն որ այդ անձուէր օրերը իրենց ստան-ձնած պարտականութիւնը կերթալին կատարել: Չարմանալին այն է որ այս օրերը ներքն համե-տութիւնը Հափաղանցութեան կը տանին, և այն աստիճան ունայնաբարութեան նշան մը ցոյց չեն տար, որ մինչև իսկ իրենց դաս տալն չեն ուզե-ծան ծանօթացնել, են չեմ գաս տուողն, այն է, կասնեմ: Կը հաւատամ հաստատ որ հայրենասիրութեան անկեղծ զգացում մը զիրենց կը վառէ, և իրենց սաներն ոչ միայն ուսեալ պիտի լինեն, այլ այս-պիսի վեհմ օրինակներ իրենց ալաց առջև ունե-

նալով, նոցա հողին իրենց ալ պիտի թափանցէ, և ուսեալ ու միանգամայն հայրենասէր վարժու-հիներ պիտի լինեն: Այսպէս ահա կազմուեցաւ և կը գործէ «Կարդացարեց»-Հայուհեաց՝ երիտասարդ ըն-կերութիւնը: Տիկին Անիկիւպեան ընկերութեան նախագահն է և օրիորդ Լուսիկ Վասիլեան ատե-նադպիրը. կը լսեմք թէ շատ կանոնաւոր կը լի-նեն իրենց ժողովներն, թէ պէտ մեզ արգելալ է սրբավայրէն ներս հայել: Վարչութեան կանդա-մակցեն օրիորդ Թագուհի Պալմազարեան, օրիորդ Նուրեկ Սիմոնեան ատենապետ և ատենադպիր, ընկերութեան զանձը յանձնուած է օրիորդ Արու-սեակ Շիշմանեանի, որ մեծ ջանքեր կը նուիրէ ընկերութեան զանձուն քարոզաւանանը և իւր խիստ կանոնաւոր բարեկարգ հայուհեացներովը կրնայ շատերուն օրինակ լինել. օրիորդ Հեղինէ Որդունի կրկնատուարի և ուրիշ կարեւոր աշխա-տութեանց հոգն տառնանած է: Երեք միւս ան-դամոց անուններն լաւ չեմ յիշեր: Սրբա ամենքն են միանգամայն որ անձուիրաբար կը դասախո-սեն: Ընկերութեան անդամակցած են Կ. Պոլսոյ, ամուսանոց եւրօպական ափանց, ծանրագլուխ և ընտիր տիկնայց և օրիորդաց դասը: Երբ ընկե-րութիւնը մէկ կողմէ վարժուհիներ կը պատրաս-տէ, միւս կողմէ իւր նիւթական զարգացմանը հող կը տանի, որպէս զի վաղընդոյթով Հայաստա-նի մէջ կանոնաւոր աղջկանց վարժարան մը հիմ-նելու կարող լինի: Պարահանգէնէն կարծեմք մօտ 5000 բուրլի հասցիլ եղած է:

«Կարդացարեց»-Հայուհեաց՝ ընկերութիւնը Ռուսիոյ հայ գեղեցիկ սեռին համակրանացը արժանի է և կարող է Ռուսիոյ և Ցածկաստանի հայ կանանց մէջ միութեան զօրաւոր կապերէն մին լինել: Եւ-սամբ թէ ձեռ քնքուշ օրիորդներն փութեան սիրոյ գրաւական մը տալ այս օրիորդաց, քայքայեական ձեռք կարկառելով նոցա. իցիկ թէ զանկէն այն-պիսիներ որը ուղեւան սոցա ջանիցն մասնակցել և այս նպատակաւ ժողովին իրենց ձեռագործներն, ժողովին իրենց բարեկամուհեաց ատենապործներն, կարգադրեն վիճակահանութիւն մը, հող չէ թէ արդիւնքն փոքր լինի թէ մեծ: Կրնանք ենթադրել թէ այսպիսի գործ մը ինչ լաւ տպաւորութիւն կանէ, ինչ սէր կազդէ միմեանց, և մեք կը միւ-թալուրեմք ու կը ծափահարեմք:

Ընկերութեանց տեղեկութիւններն բաւական զմեզ զարեցուցին, հող չէ, վաղուց է այս նիւթի վրա չեմք գրած. երկու օր վերջի թղթատարով կը գրեմք քաղաքական նամակն:

Հայկակ

«ՄԵԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 315 փետրվարի: Ձեր ջանքերը պսակվեցան, երեք ընկերութիւնների միու-թիւնը սկզբունքի մէջ ընդունված է պաշտո-նապէս: Պարահանգէսը յօգուտ «Արեւելան»-Կարդացարեց ընկերութեան տուեց 6000 բուրլ արգիւնք:

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՄՕՍԿՎԱ, 2 փետրվարի: Նրէի հասաւ այս-տեղ բոլորական իշխանը. այսօր սուրհան-դակի գնացելով նա ուղևորվում է դէպի Ս. Պետերբուրգ:

ԲԵՐԼԻՆ, 2/14 փետրվարի: Չայնեի մեծա-մասնութեամբ կոմ Արնիմ Բայցէնբուրգ ազ-գային ժողովի նախագահ է ընտրված:

ՎԻԵՆԱ, 2/14 փետրվարի: Լիմի ափերին, աւստրիական զօրքերի գրաւած երկրներում խոյութեան զօրքներ են երևում: Չայնեցայից և Վիշգրադից այնտեղը պահպան զօրքեր են ուղարկել: Սերաէֆօի մէջ վեց բաւալիւն-ներ կան, որոնք պատրաստ են առաջ խաղա-լու:

ԲԵՐԼԻՆ, 1/13 փետրվարի: Նրէի բացվեցաւ ռէկիւստագը. զահական ծառ խաղաղատիրա-կան է, և յայտնում է, որ տար պետութիւն-ներին հետ Գերմանիան բարեկամական յարա-բերութիւնների մէջ է գտնվում: Գերմանիան ձգտում է ամբապէս ապահովել եւրօպական խաղաղութիւնը. բայց այս գահական ծառը խոտաւանում է օրէնքի հետեւալ ամենանշա-նաւոր ծրագիրներն ինչպէս են, բիւրժէտի երկամեայ շրջանի գործադրութիւնը, զին-ւորական օրէնքի գործադրութիւնը, սոցիալա-կանների վրա զորադրվող օրէնքի տեղադ-րութիւնը, և խաղաղական ուղիւնստի կղզիների հետ առեւտրական դաշնադրութիւնը:

Իմացարի—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ